Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017թ.
դեկտեմբերի 21-ի նիստի N 53
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԱՎԱՐԻ ՀՈԼՇՏԻՆ ՑԵՂԻ ՏՈՀՄԱԲՈՒԾԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետությունում բուծվող տավարի գրեթե 95%-ը կազմում են տեղական՝ կովկասյան գորշ ցեղի կենդանիները, որոնք թեև գերազանց հարմարված են տեղի բնակլիմայական պայմաններին, այնուամենայնիվ աչքի չեն ընկնում բարձր կաթնատվությամբ, ինչի հետևանքով տարիներ շարունակ մեկ կովի միջին կաթնատվությունը տատանվում է 2000 կգ-ի սահմաններում: Մինչդեռ բազմաթիվ երկրներում կովերի կաթնատվությունն ավելացնելու նպատակով իրականացնում են տավարի արմատական բարելավման աշխատանքներ՝ տեղական ցեղերի կենդանիները տրամախաչելով աշխարհի բարձր կաթնատու ցեղերի կենդանիներով:

2. Տարբեր երկրներում՝ Գերմանիայում, Ռուսաստանում և այլ երկրներում իրականացված փորձերը ցույց են տվել, որ տեղական տավարի և հոլշտին ցեղերի կենդանիների տրամախաչումից ստացված սերունդը ոչ միայն լավ հարմարվում է տեղի բնակլիմայական պայմաններին, այլև կաթնային մթերատվության ցուցանիշներով էականորեն գերազանցում է տեղական կովերի կաթնատվությանը:

3. Ստեղծված իրավիճակը հրամայական է դարձնում տավարի հոլշտին ցեղի մաքրացեղ բուծման նպատակով տոհմաբուծարանի ստեղծումը, որը թույլ կտա ստանալ բարձր տոհմային և մթերատու հատկանիշներով օժտված զտացեղ կենդանիներ և մատակարարել հանրապետության այլ տավարաբուծական տնտեսություններին:

II. ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4. Հայաստանի Հանրապետությունում մեկնարկած ագրարային բարեփոխումների (1991 թ.) արդյունքում մասնավորեցված տավարի նախիրներում կարճ ժամանակ անց դադարեցին իրականացնել լայնածավալ տոհմասելեկցիոն աշխատանքներ: Ստվարածավալ գլխաքանակ ընդգրկող տոհմային նախիրներին փոխարինեցին մասնատված և գրեթե տոհմային կորիզից զուրկ կենդանիների խմբեր, որոնցում ոչ միայն չէր իրականացվում կենդանիների նպատակային ընտրություն և համապատասխան զույգընտրություն, այլև օգտագործվում էին անհայտ ծագմամբ ցուլեր, իսկ չկարգավորված զուգավորման հետևանքով ծնված կենդանիները աստիճանաբար կորցնում էին իրենց տոհմային արժեքը և մթերատվության մակարդակը:

5. Տավարի հոլշտին ցեղի և դրա ածանցյալ՝ սևաբղետ ցեղի կենդանիների թվաքանակը մեր հանրապետությունում այդ տարիներին կազմում էր տավարի ընդհանուր գլխաքանակի 2,5-3,0% - ը և չկանոնակարգված ընտրասերման հետևանքով դրանք, տրամախաչելով այլ ցեղերի կենդանիների հետ, կորցրեցին իրենց արյունայնությունը: Մինչդեռ հոլշտին ցեղը, իր կաթնատվության ցուցանիշներով լինելով առաջինը աշխարհում, լայնորեն օգտագործվում է տավարի տեղական ցեղերի կաթնատվությունը բարձրացնելու նպատակով:

6. Իրավիճակը շտկելու նպատակով, ՀՀ կառավարության օժանդակությամբ, 2007 թվականից եվրոպական երկրներից ներկրվեցին տավարի համաշխարհային ճանաչում ունեցող հոլշտին, սիմենթալ և շվից ցեղերի տոհմային կենդանիներ: Ներկրված հոլշտին ցեղերի տոհմային կենդանիներից «Ագրոհոլդինգ Արմենիա» ՍՊԸ և «Արզնու տոհմային ԹՏԻՍ»

ԲԲԸ նախիրներում ձևավորվեց անհրաժեշտ տոհմային կորիզ և հնարավորություն ընձեռվեց տեղական վերարտադրության արդյունքում ստանալ բարձր տոհմային և մթերատու հատկանիշներով օժտված հոլշտին ցեղի մաքրացեղ կենդանիներ: Այդ նախիրներում կովերի միջին կաթնատվությունը կազմում է 5-6 հազար կգ և ավելի, ինչը 2-3 անգամ գերազանցում է մեր տեղական կովերի կաթնատվության մակարդակը:

7. Թեև ներկայումս մեր հանրապետությունում արդեն իսկ կան հոլշտին ցեղի կենդանիներ ընդգրկող նախիրներ, այնուամենայնիվ այդ նախիրներում բուծվում են նաև այլ ցեղերի (շվից, սիմենթալ) կենդանիներ, ինչը չի բացառում այդ ցեղերի միջև տեղի ունեցող տրամախաչումները և թույլ չի տալիս իրականացնել մաքրացեղ բուծում: Մինչդեռ անհրաժեշտություն է առաջացել ստեղծել հոլշտին ցեղի տոհմաբուծարան, որտեղ հնարավոր կլինի իրականացնել բացառապես ներցեղային բուծում և մաքուր բուծման արդյունքում ստանալ հոլշտին ցեղի զտարյուն տոհմային կենդանիներ և դրանք մատակարարել հանրապետության առաջատար տավարաբուծական տնտեսություններին:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Ծրագրի նպատակն է հիմնել հոլշտին ցեղի տոհմաբուծարան, ինչը հնարավորություն կընձեռի լուծել հետևյալ խնդիրները.

1) նվազագույնի հասցնել տարբեր ցեղերի կենդանիների տրամախաչումը միմյանց հետ և տարբեր արյունայնությամբ խառնացեղ կենդանիների ստացումը իր իսկ տոհմաբուծարանի համար;

2) ստանալ հոլշտին ցեղի մաքրացեղ կենդանիներ, որոնք կունենան հավաստի նախնիներ և աչքի կընկնեն ցեղին բնորոշ տոհմային և մթերատու հատկանիշներով;

3) խուսափել զուգավորման հետևանքով միմյանց փոխանցվող վարակիչ հիվանդություններից և ստանալ առողջ և կենսունակ սերունդ;

4) ձևավորել մասնագիտացված տոհմաբուծարան, որը կկարողանա հոլշտին ցեղի բարձրարժեք կենդանիներ մատակարարել հանրապետության այլ տնտեսություններին;

5) հնարավորություն ընձեռել տավարաբուծական տնտեսություններին իրականացնել տեղական կովկասյան գորշ և հոլշտին ցեղերի կենդանիների տրամախաչում, որը կտրուկ կբարձրացնի ստացվող սերնդի կաթնատվության մակարդակը և մսային հատկանիշները, ինչը կնպաստի մեր հանրապետությունում արտադրվող տավարի մսի և կաթի արտադրության ծավալների ավելացմանը:

IV. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

9. Տնտեսությունը նախատեսում է համալրել հոլշտին ցեղի մաքրացեղ տոհմային կենդանիներով և անհրաժեշտության դեպքում դիտարկել եվրոպական երկրներից նոր խմբաքանակի ներկրման հնարավորությունը: Կենդանիների մաքրացեղ բուծման միջոցով նախատեսվում է 2018-2022 թվականների ընթացքում հանրապետության տավարաբուծական ֆերմաներին մատակարարել հոլշտին ցեղի 580 գլուխ կենդանիներ, որից 369-ը՝ տոհմային ցուլիկներ, 66-ը՝ երինջներ և 145-ը՝ կովեր:

10. Տոհմաբուծարանի ստեղծման ծրագիրը իրականանալու է մասնավոր ներդրումների միջոցով՝ ինչը կարող են իրականացնել ինչպես անհատ ձեռներեցները, այնպես էլ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ցանկացած տնտեսավարող սուբյեկտ: Պետության դերը կայանալու է տնտեսության հիմնական գործունեությանը նպաստող այլ ծրագրերի մեջ ընդգրկման, ծրագրի իրականացման մեխանիզմների մշակման, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվության տրամադրման, տոհմասելեկցիոն աշխատանքների պլանավորման, կազմակերպման և իրականացման, մարզերում ըստ շրջանացման գլխաքանակի տեղաբաշխման գործընթացներում:

11. Համաձայն զոոհիգիենիկ չափանիշների, ծրագրով նախատեսված բարձր մթերատու կենդանիների պահվածքի համար անհրաժեշտ է 3660 մ^2 մակերեսով և շուրջ 183,0 մլն ՀՀ դրամ արժողությամբ շինություններ (անասնագոմեր, կթի սրահ, ծնարան և այլ ենթակառուցվածքներ)՝ համաձայն ՀՏՊ 1-99 և ՀՏՊ ԱՊԿ 10.03.001-00 չափորոշիչների, ինչպես նաև շուրջ 224,6 մլն ՀՀ դրամ արժողությամբ սարքավորումներ և 42,0 մլն ՀՀ դրամ արժողությամբ մեքենաներ և գյուղատնտեսական տեխնիկա: Համալիրի համար ձեռք կբերվի նաև բեռնատար մեքենաներ և տրակտորներ:

12. Ծրագրով ակնկալվող արդյունքն ապահովելու համար կիրառվելու են կենդանիների պահվածքի և կերակրման ինտենսիվ տեխնոլոգիաներ: Տնտեսությունում ներդրվելու է կովերի շուրջտարյա մսուրային պահվածքը, իսկ արոտա-մսուրային պահվածքը կկիրառվի այլ սեռահասակային խմբերի կենդանիների համար: Համալիրում կկառուցվի միաժամանակ 12-ից ավելի կով կթելու հնարավորությամբ կթի սրահ, ինչը թույլ կտա ստանալ մեխանիկական և կենսաբանական անցանկալի տարրերից զերծ բարձրորակ կաթ:

13. Ծրագրի բոլոր ժամանակահատվածների համար պահպանման ծախսերը անփոփոխ են և հաշվարկված են 2017 թվականի գներով: Քանի որ նպատակ է հետապնդվել տնտեսավարողներին տոհմային կենդանիները հատկացնել մատչելի գներով, ապա կենդանիների տոհմային վաճառքի հաշվարկը կատարվել է մսեղիքի վաճառքին համարժեք՝ 1 կգ կենդանի զանգվածի գինը սահմանելով 1300 դրամ, իսկ 3-րդ տարվանից հետո՝ 1400 դրամ: Կաթի 1 կգ-ի գինը սահմանվել է 170 ՀՀ դրամ, իսկ 3-րդ տարվանից սկսած՝ 180 ՀՀ դրամ:

14. Նախատեսվում է 2018 թվականի ապրիլ ամսին ձեռք բերել 3 - 4 ամսական հղիություն ունեցող «Հոլշտին» ցեղի երինջներ (յուրաքանչյուրը 1. 2 մլն ՀՀ դրամ արժեքով), որի հիման վրա կազմվել է հետագա ծնելիության ժամանակացույցը և հոտի շարժը (աղյուսակ 1): Նախրում կովերի գլխաքանակը կազմում է 200 գլուխ, որոնցից 50 գլուխը կամ 25 %-ը յուրաքանչյուր տարի կփոխարինվի երինջներով:

Աղյուսակ 1

2018–2023 թվականների հոտի շարժը

Սեռահասակային կազմը	01.04.18	31.12.18	31.12.19	31.12.20	31.12.21	31.12.22	31.12.23
	գլուխ	գլուխ	գլուխ	գլուխ	գլուխ	գլուխ	գլուխ
կովեր		199	178	200	200	200	200
ցուլեր			0	0	0	0	0
երինջներ	200		78	72	104	107	107
մինչև 1 տարեկան էգ հորթ		95	74	106	109	109	109

մինչև 1 տարեկան արու հորթ		98	74	106	109	109	109
Ընդամենը	200	392	404	484	522	525	525

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ

15. Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր ներդրումների հաշվին: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է շուրջ 689,6 մլն ՀՀ դրամ (աղյուսակ 2), այդ թվում՝ 240,0 մլն ՀՀ դրամը՝ 200 գլուխ տոհմային երինջների ձեռքբերման, 183,0 մլն ՀՀ դրամը՝ անհրաժեշտ շինությունների կառուցման, 224,6 մլն ՀՀ դրամը՝ սարքավորումների, իսկ 42,0 մլն ՀՀ դրամը՝ տրակտորների և ավտոմեքենաների ձեռքբերման համար:

Աղյուսակ 2

Ծրագրի ներդրման համար անհրաժեշտ դրամական միջոցները, ՀՀ դրամ

Անհրաժեշտ հիմնական միջոցներ	$մ^2$	Գումար	
Անհրաժեշտ շինություններ	3,660	50,000	183,000,000
Սարքավորումներ և կթի սրահ	1	224,572,810	224,572,810
Ավտոմեքենաներ, տրակտորներ	6	7,000,000	42,000,000
Ընդամենը			**449,572,810**
Անհրաժեշտ կենդանիներ			
Երինջներ	200	1,200,000	240,000,000
Ընդամենը կենդանիներ			**240,000,000**
Ընդհանուր նախնական ներդրում			**689,572,810.00**

16. Ծրագրի ֆինանսական հաշվարկը ներկայացված է աղյուսակ 3-ում: Եկամուտը կգոյանա կաթի, մսի, տոհմային կենդանիների և գոմաղբի վաճառքից: Ներդրումների գերակշիռ մասը անհրաժեշտ է կատարել առաջին՝ մեկնարկային տարում, որից հետո այն կապահովի դրական դրամական հոսքեր: Ծրագրի ետգնման ժամկետայնությունը 7 տարի է, իսկ եկամտաբերությունը 2023 թվականին կկազմի 44%:

17. Տոհմաբուծարանը, 2023 թվականից սկսած, կաշխատի լրիվ ներուժով՝ հետագա տարիներին ապահովելով գրեթե նույն դրամական հոսքերը: Պահպանելով կերակրման նորմատիվային բոլոր պահանջները՝ ընդհանուր ծախսերի հաշվարկում այն կազմում է 58-64%:

Աղյուսակ 3

Ծրագրի ֆինանսական հաշվարկը, ՀՀ դրամ
(2018-2023 թթ.)

Ծրագրի արժեքը	2018	2019	2020	2021	2022	2023
Հիմնական միջոցներ	269,743,686	134,871,843.00		44,957,281		
Կենդանիներ	240,000,000					
Ընդամենը	**509,743,686**	**134,871,843**	**-**	**44,957,281**	**-**	**-**
Կաթի և տոհմային վաճառքից հասույթ, դրամ	**46,218,225**	**234,736,210**	**302,976,907**	**393,319,860**	**460,204,860**	**483,304,860**
Արտադրական ծախսեր	(8,439,080)	(16,962,551)	(20,113,141)	(23,573,163)	(25,176,589)	(25,303,175)
Կեր	(61,998,325)	(133,326,235)	(160,439,149)	(164,915,815)	(166,417,521)	(165,601,225)
Աշխատավարձ	(28,560,000)	(51,408,000)	(53,856,000)	(58,752,000)	(63,648,000)	(63,648,000)
Այլ Ծախսեր	(4,949,870)	(10,084,839)	(11,720,414)	(12,362,049)	(12,762,105)	(12,727,620)
Այլ գործառնական ծախսեր	(3,117,437)	(3,429,181)	(3,772,099)	(4,149,308)	(4,564,239)	(5,020,663)
Ընդամենը տարեկան ելք	**(107,064,712)**	**(215,210,806)**	**(249,900,803)**	**(263,752,336)**	**(272,568,455)**	**(272,300,683)**
Ընդամենը դրամական ներհոսք	46,218,225	234,736,210	302,976,907	393,319,860	460,204,860	483,304,860
Ընդամենը դրամական արտահոսք	(107,064,712)	(215,210,806)	(249,900,803)	(263,752,336)	(272,568,455)	(272,300,683)
Զուտ դրամ. *ընթացիկ* հոսքեր	**(60,846,487)**	**19,525,404**	**53,076,104**	**129,567,524**	**187,636,405**	**211,004,177**
Ընդամենը դրամական հոսք	**(570,590,173)**	**(115,346,439)**	**53,076,104**	**84,610,244**	**187,636,406**	**211,004,177**
Ետգնման ժամկետայնություն	7					
Եկամտաբերություն	-132%	8%	18%	33%	41%	44%
Կերի կշիռը ընդհանուր ծախսերի մեջ	58%	62%	64%	63%	61%	61%

VI. ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

18. Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում հիմնել տավարի հոլշտին ցեղի տոհմաբուծարան, որի համար ելակետային տարում՝ 2018 թվականին ձեռք կբերվի 200 գլուխ հոլշտին ցեղի մաքրացեղ երինջներ, որոնցից ստացված սերնդի շնորհիվ 2023 թվականի վերջին տավարի ընդհանուր գլխաքանակը կհասցվի շուրջ 525 գլխի, այդ թվում կովերինը՝ 200 գլխի:

19. Ծրագրի իրականացման արդյունքում տոհմաբուծարանը հանրապետության տավարաբուծական տնտեսություններին կմատակարարի 580 գլուխ տոհմային կենդանիներ, որից 369-ը՝ հոլշտին ցեղի տոհմային ցուլիկներ, 145-ը՝ կովեր և 66-ը՝ երինջներ: Որպես հավելյալ արդյունք, 2018-2023 թվականներին տոհմաբուծարանում կարտադրվի գրեթե 7200 տոննա կաթ և 297.5 տոննա (կենդանի զանգվածով) միս:

20. Ծրագրի ավարտից հետո տոհմաբուծարանը տարեկան տավարաբուծական տնտեսություններին կվաճառի 203-210 գլուխ տոհմային կենդանիներ, որից 107-110-ը՝ ցուլիկներ, 40-46-ը՝ երինջներ և 50-55-ը՝ կովեր, իսկ տարեկան կարտադրի 900 տոննա կաթ, ինչպես նաև 6-7 տոննա միս:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017թ.
դեկտեմբերի 21-ի նիստի N 53
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ո Ւ Մ Տ Ա Վ Ա Ր Ի Շ Վ Ի Ց Ֆ Ե Ղ Ի Տ Ո Հ Մ Ա Բ Ո Ւ Ծ Ա Ր Ա Ն Ի Ս Տ Ե Ղ Ծ Մ Ա Ն Ե Վ Զ Ա Ր Գ Ա Ֆ Մ Ա Ն

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Տավարաբուծությունը Հայաստանում ունի հարուստ ավանդույթներ: Հայկական լեռնաշխարհում տավարաբուծությամբ զբաղվում են անհիշելի ժամանակներից և վայրի տավարի ընտելացման օջախներից մեկը եղել է Հայաստանը, որտեղ դրա զարգացման համար կային նպաստավոր պայմաններ՝ լեռնային արոտավայրերն ու խոտհարքները: Այստեղ բուծվող տավարը հարյուրամյակներ շարունակ ունեցել է փոքր կենդանի զանգված և ցածր կաթնատվություն, բայց կենդանիները շատ դիմացկուն էին և հարմարված տեղի բնակլիմայական պայմաններին: Բուծվող կովերի զանգվածը եղել է 175-270 կգ, իսկ կաթնատվությունը տատանվել է 400-640 կգ-ի սահմաններում:

2. Նախորդ դարի 30-ական թվականներից սկսած սկսել են տարվել լայնածավալ տոհմասելեկցիոն աշխատանքներ տեղական տավարի բարելավման ուղղությամբ և արդյունքում ստեղծվել է կովկասյան գորշ ցեղը, որի կովերի կաթնատվությունը 591 կգ-ից 1987 թվականին հասել է 1876 կգ-ի, կաթի արտադրությունը 170,4 հազար տոննայից՝ 576 հազար տոննայի, տավարի մսի արտադրությունը (սպանդային քաշով) 21,6 հազար տոննայից՝ 45,0 հազար տոննայի:

3. Հետխորհրդային շրջանում, սակայն, զգալի չափով նվազել է կենդանիների գլխաքանակը և տավարաբուծությունից ստացվող մթերքների արտադրությունը, պետական տնտեսությունների լուծարման արդյունքում ստեղծվել են շուրջ 320 հազար գյուղացիական փոքր տնտեսություններ, որտեղ տավարի միջին գլխաքանակը կազմում է 3 գլուխ: Ստեղծված նոր իրավիճակում պահանջվում են ցեղերի կատարելագործման, դրանց հետ տարվող տոհմասելեկցիոն աշխատանքների իրականացման նոր մոտեցումներ, ժամանակի հրամայականն է դարձել ուշադրության կենտրոնում պահել կենդանիների հետ տարվող տոհմասելեկցիոն համալիր միջոցառումների իրականացումը, տոհմային բազայի ամրապնդումը, տոհմային տնտեսությունների գործունեության բարելավումը և նորմերի ստեղծումը, արհեստական սերմնավորման աշխատանքների, նախիրների վերարտադրության, ցուլերի աճեցման և շահագործման բարելավումը, կենդանիներին համալիր հատկանիշներով գնահատումը, ընտությունն ու զույգընտրությունը, օրակարգային խնդիր է դարձել համաշխարհային բարձր մթերատու ցեղերով կովկասյան գորշ ցեղի բարելավումը՝ ցեղի ներցեղային կառուցվածքի բարելավման, կաթնատու տիպի ստեղծման և բուծման համար:

4. Հայաստանի Հանրապետության լեռնային և նախալեռնային տարածաշրջաններում առկա են հարուստ բուսածածկով բնական խոտհարքներ, ընդարձակ արոտավայրեր, որտեղ նպատակահարմար է բուծել լեռնային պայմաններին լավ հարմարված շվից ցեղի կենդանիներ: Այդ տարածաշրջանների տնտեսություններից մեկում, որտեղ կան բավարար ենթակառուցվածքներ և սեփական կերի բազան ստեղծելու իրատեսական ներուժ, նախատեսվում է հիմնել ժամանակակից տեխնոլոգիաներով գործող շվից ցեղի տոհմաբուծարան:

II. ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության գլխավոր ճյուղ է հանդիսանում տավարաբուծությունը: Անասնաբուծական մթերքների համախառն արտադրանքի մեջ տավարաբուծությունից ստացվող մթերքները կազմում են շուրջ 70 %, արտադրվող կաթի 93 %-ը և մսի 64 %-ը ստացվում են տավարաբուծությունից:

6. Խորհրդային շրջանում այս ճյուղը կրել է քանակական և որակական մեծ փոփոխություններ. ավելացել է տավարի գլխաքանակը, բարձրացել է կենդանիների մթերատվությունը, ստեղծվել հայրենական կովկասյան գորշ ցեղը և բազմաթիվ բարձր մթերատու նախիրներ:

7. Սակայն ներկայումս մեկ մարդու հաշվով հանրապետությունում արտադրվող կաթի և մսի ցուցանիշները ցածր են ինչպես գոյություն ունեցող ֆիզիոլոգիական նորմաներից (տարեկան մեկ շնչին՝ 380 կգ կաթ, 80 կգ միս, որից 34 կգ-ը՝ տավարի), այնպես էլ շատ երկրների ցուցանիշներից:

8. Հանրապետությունում տավարաբուծության զարգացման, բարձր տոհմամթերատու հատկանիշներով օժտված կենդանիներ աճեցնելու, նախիրները բարձրարժեք կենդանիներով համալրելու և տավարի մսի ու կաթի արտադրության ծավալներն ավելացնելու գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է ունենալ ժամանակակից բարձր մթերատու տոհմային կենդանիներով համալրված և թիրախավորված տոհմասելեկցիոն աշխատանքների արդյունքում ձևավորված տոհմային կորիզ ունեցող տավարի արժեքավոր նախիրներ:

9. Ստեղծված իրավիճակը հրամայական է դարձնում տոհմաբուծարանների ստեղծումը, որը կնպաստի տոհմային մատղաշի աճեցմանը և կաթի ու մսի արտադրության ծավալների ավելացմանը:

10. Ներկայումս տավարաբուծության զարգացմանը խոչընդոտող գործոնները հետևյալն են.

1) կերարտադրության ոչ բավարար մակարդակը և միակողմանի բնույթը,
2) տավարի պահվածքի, բուծման և որակական բարելավման ժամանակակից տեխնոլոգիական նվաճումների անտեսումը,
3) տավարի և ոչխարի ֆերմաների՝ մեկ հարթակի վրա կողք կողքի լինելը (զոոհիգիենիկ պահանջների համաձայն դրանք պետք է գտնվեն իրարից 150-200 մետր հեռավորություն վրա),
4) նորոգման մատղաշի ստացման և աճեցման համար համապատասխան պայմանների բացակայությունը, ինչպես նաև նախրի վերարտադրության տեխնոլոգիական խախտումները,
5) նախրում անասնաբուծական և տոհմային հաշվառման ընդհատվածությունը,
6) կենդանիների թերկերակրման հետևանքով անհամաչափ մարմնակազմությամբ թերզարգացած կենդանիների առկայությունը,
7) կովերի արհեստական սերմնավորման չիրականացումը,
8) կովերի ոչ լիարժեք կերակրումը,
9) կովերի մեքենայական կթի բացակայությունը,
10) կովերի արոտային պահվածքի ոչ հիմնավորված երկարացումը,
11) տնտեսություններում անասնաբույծ սելեկցիոներ մասնագետի բացակայությունը,
12) կովերի գլխաքանակը նպաստավոր սահմաններում չպահպանելը:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11. Ծրագրի նպատակն է ներմուծել տավարի տեղական կովկասյան գորշ ցեղի կաթնային և մսային հատկանիշների կատարելագործման գործընթացում մեծ դեր խաղացած շվից ցեղի տոհմային կենդանիներ և հանրապետության որևէ տավարաբուծական տնտեսության հիմքի վրա հիմնել շվից ցեղի տոհմաբուծարան, ինչը հնարավորություն կընձեռի լուծել հետևյալ խնդիրները.

6) խուսափել տարբեր ցեղերի կենդանիների հախուռն տրամախաչումից և նվազագույնի հասցնել տարբեր արյունայնությամբ խառնացեղ կենդանիների ստացումը իր իսկ տոհմաբուծարանի համար,
7) աճեցնել շվից ցեղի մաքրացեղ կենդանիներ, որոնք կունենան հավաստի նախնիներ և աչքի կընկնեն ցեղին բնորոշ տոհմային և մթերատու հատկանիշներով,
8) զերծ մնալ զուգավորման հետևանքով միմյանց փոխանցվող վարակիչ հիվանդություններից և աճեցնել առողջ ու կենսունակ սերունդ,
9) ստեղծել մասնագիտացված տոհմաբուծարան, որը կկարողանա շվից ցեղի բարձրարժեք կենդանիներ վաճառել հանրապետության այլ տնտեսություններին,
10) համապատասխան նախապայմաններ ընձեռել տավարաբուծական տնտեսություններին՝ իրականացնելու տեղական կովկասյան գորշ և շվից ցեղերի կենդանիների կլանողական տրամախաչում, որը զգալիորեն կբարձրացնի ստացվող սերնդի կաթնատվության մակարդակը և մսային հատկանիշները, ինչը կնպաստի մեր հանրապետությունում արտադրվող տավարի մսի և կաթի արտադրության ծավալների ավելացմանը:

IV ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

12. Ներկայումս արդյունաբերական հիմունքներով վարվող տնտեսություններում պահանջվում է բուծել բարձր կաթնատվությամբ միատիպ, արդյունաբերական տեխնոլոգիայի պահանջներին համապատասխանող նախիրներ: Այդպիսի նախիրների ստեղծումն արագացնելու նպատակով նպատակահարմար է դրանք տրամախաչել բարձր մթերատու ցեղերի հետ (տեղական համեմատաբար ցածր մթերատու ցեղերի արագ կատարելագործման համար):

13. Գյուղատնտեսական կենդանիների տրամախաչման դեպքում առաջանում է համակցված փոփոխություն, ինչը նպաստավոր է հետագա սելեկցիայի համար: Առաջին սերնդի մոտ ի հայտ է գալիս նաև հետերոզիսի երևույթը կամ հիբրիդային ուժը, որն արտահայտվում է կենսունակության, հարմարվողականության և մթերատվության բարձրացմամբ (ելակետային ծնողական ձևերի համեմատությամբ):

14. Խորհրդային Միության վերջին տարիներին Մոսկվայից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել շվից ցեղի արտադրող ցուլերի սերմնահեղուկ, որը տոհմային ձեռնարկություններում օգտագործվել է կաթնատու նախիրների կատարելագործման և նոր նախիրներ ստեղծելու նպատակով:

15. Հանրապետությունում կաթնատու տավարաբուծությունն աստիճանաբար վարվում է արդյունաբերական տեխնոլոգիայի հիմունքներով, ուստի պլանային կովկասյան գորշ ցեղը մթերատվության մակարդակով և կրծի ձևով կարիք ունի հետագա կատարելագործման ինչպես մաքուր բուծման, այնպես էլ միջցեղային տրամախաչման միջոցով:

16. Ծրագրի իրականացման համար ներդրվող գումարը հետագա տարիներին կարող է հատուցվել՝ բարձր մթերատու երինջների աճեցմամբ և դրանց վաճառքով:

17. Տոհմաբուծարանի ստեղծման ծրագիրը իրականանալու է մասնավոր ներդրումների միջոցով՝ ինչը կարող են իրականացնել ինչպես անհատ ձեռներեցները, այնպես էլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, ինչպես նաև փակ և բաց բաժնետիրական ընկերությունները: Պետության դերը կայանալու է տնտեսության հիմնական գործունեությանը նպաստող այլ ծրագրերի մեջ ընդգրկման, ծրագրի իրականացման մեխանիզմների մշակման, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվության տրամադրման,

տոհմասելեկցիոն աշխատանքների պլանավորման, կազմակերպման և իրականացման, մարզերում ըստ շրջանացման գլխաքանակի տեղաբաշխման գործընթացներում:

18. Նախագծի ռիսկերը՝

1) ոչ հիգիենիկ կերերի օգտագործումը,
2) անասնաշենքերի անասնաբուծական հիգիենայի ոչ բավարար մակարդակը,
3) կենդանիների պահվածքի և խնամքի պայմանների խախտումները,
4) անասնաբուժական և անասնաբուծական միջոցառումների ժամանակին չիրականացնելը:

Աղյուսակ 1

2018–2023 թվականներին նախրի շարժը

Սեռահասակային խմբերը	01.04.18	31.12.18	31.12.19	31.12.20	31.12.21	31.12.22	31.12.23
	գլուխ	գլուխ	գլուխ	գլուխ	գլուխ	գլուխ	գլուխ
կովեր	0	135	133	150	150	150	150
ցուլեր	0	0	0	0	0	0	0
երինջներ	150	0	62	54	80	79	81
մինչև 1 տարեկան էգ հորթեր	0	62	55	82	81	83	83
մինչև 1 տարեկան արու հորթեր	0	64	55	82	81	83	83
Ընդամենը	150	261	305	368	392	395	397

19. Տոհմաբուծարանի հիմնման նպատակով ընդհանուր ներդրումները կազմում են 520,7 մլն ՀՀ դրամ, որից շուրջ 165,0 մլն ՀՀ դրամը կուղղվի 150 գլուխ շվից ցեղի տոհմային երինջների գնման, իսկ 355,7 մլն ՀՀ դրամը՝ շինությունների, մյուս ենթակառուցվածքների հիմնման և այլ հիմնական միջոցների ձեռքբերման համար:

Աղյուսակ 2

Ծրագրի ներդրման համար անհրաժեշտ դրամական միջոցները, ՀՀ դրամ

Անհրաժեշտ հիմնական միջոցներ	$մ^2$	Գումար	
Անհրաժեշտ շինություններ	2820	50000	141,000,000
Անհրաժեշտ սարքավորումներ տոհմաբուծարանի	1	179,658,248	179,658,248
Ավտոմեքենաներ, տրակտորներ	5	7,000,000	**35,000,000**
Ընդամենը			**355,658,248**
Անհրաժեշտ կենդանիներ			
Երինջներ	150	1,100,000	165,000,000
Ընդամենը կենդանիներ			**165,000,000**
Ընդհանուր նախնական ներդրում 6 տարվա ընթացքում			**520,658,248**

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ

20. Կովերի գլխաքանակը լրացնելու համար անհրաժեշտ է գնել 150 գլուխ շվից ցեղի 3-6 ամսական հղիություն ունեցող 21-22 ամսական տարիքի շուրջ 500 կգ կենդանի զանգվածով տոհմային երինջներ:

21. Տնտեսության արտադրական գործունեությունը առաջիկա 5-6 տարիներին հստակեցնելու նպատակով կազմվել է նախրի շարժ (աղյուսակ 1) և նախատեսվել է 2023 թվականին կովերի կաթնատվությունը հասցնել 5500-6000 կգ-ի և որպես տոհմային տնտեսություն, նպատակային աճեցման մեթոդով յուրաքանչյուր տարի իրացնել 160 գլուխ տոհմային մատղաշ:

22. Ստորև ներկայացվում է ծրագրի ֆինանսական հաշվարկը (աղյուսակ 3):

Աղյուսակ 3
Ծրագրի ֆինանսական հաշվարկը, ՀՀ դրամ
(2018-2023 թթ.)

Տոհմաբուծարան	2018	2019	2020	2021	2022	2023
Հիմնական միջոցներ	248,960,774	53,348,737	53,348,737			
Կենդանիներ	165,000,000					
Ընդամենը	**413,960,774**	**53,348,737**	**53,348,737**	**-**	**-**	**-**
Կաթի և տոհմային վաճառքից հասույթ, դրամ	**32,692,455**	**151,056,350**	**182,093,280**	**225,498,040**	**246,097,570**	**246,287,470**
Տոհմաբուծարանի ծախսեր						
Արտադրական ծախսեր	(6,301,180)	(12,672,685)	(15,260,670)	(17,890,850)	(18,959,800)	(19,086,386)
Կեր	(41,302,795)	(60,397,346)	(74,427,452)	(75,161,851)	(76,355,360)	(75,912,082)
Աշխատավարձ	(4,800,000)	(12,000,000)	(13,200,000)	(19,200,000)	(19,200,000)	(19,200,000)
Ընդամենը տոհմաբուծ. ծախս	(52,403,975)	(85,070,031)	(102,888,121)	(112,252,701)	(114,515,160)	(114,198,468)
Այլ Ծախսեր	(2,620,199)	(4,253,502)	(5,144,406)	(5,612,635)	(5,725,758)	(5,709,923)
Այլ գործառնական ծախսեր	(2,489,608)	(2,738,569)	(3,012,425)	(3,313,668)	(3,645,035)	(4,009,538)
Ընդամենը տարեկան ելք	**(57,513,781)**	**(92,062,102)**	**(111,044,953)**	**(121,179,004)**	**(123,885,952)**	**(123,917,929)**
Ընդամենը դրամական ներհոսք	32,692,455	151,056,350	182,093,280	225,498,040	246,097,570	246,287,470
Ընդամենը դրամական արտահոսք	(57,513,781)	(92,062,102)	(111,044,953)	(121,179,004)	(123,885,952)	(123,917,929)
Զուտ դրամ. *ընթացիկ* հոսքեր	**(24,821,326)**	**58,994,248**	**71,048,327**	**104,319,036**	**122,211,618**	**122,369,541**
Ընդամենը դրամական հոսք	**(438,782,100)**	**5,645,511**	**17,699,590**	**104,319,036**	**122,211,618**	**122,369,541**
Ներդրում 6 տարվա ընթացքում	520,658,248					
Եռգնման ժամկետայնություն	7					
Եկամտաբերություն	-76%	39%	39%	46%	50%	50%
Կերի կշիռը ընդհանուր ծախսերի մեջ	72%	66%	67%	62%	62%	61%

23. Նախատեսվող տոհմաբուծարանում կաթի իրացումից ստացվում է հասույթի մինչև մեկ երրորդը, ուստի տնտեսության եկամտաբերությունը պայմանավորող առանցքային գործառույթը տոհմային ցուլիկների և երնջացուների աճեցումն ու վաճառքն է հանրապետության այլ տնտեսություններին, որն էլ տավարաբուծության եկամտաբերության հիմնական աղբյուրն է:

VI. ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

24. Ծրագրի իրականացման արդյունքում 2018-2023 թվականներին տոհմաբուծարանը հանրապետության տավարաբուծական տնտեսություններին կմատակարարի 588 գլուխ շվից ցեղի տոհմային կենդանիներ, այդ թվում՝ 154 գլուխ կովեր, 75 գլուխ երինջներ և 359 գլուխ ցուլիկներ: Որպես հավելյալ արդյունք, 2018-2023 թվականներին տոհմաբուծարանում կարտադրվի նաև 4100 տոննա կաթ և 246 տոննա միս (կենդանի զանգվածով):

25. Ծրագրի ավարտից հետո տոհմաբուծարանը տարեկան տավարաբուծական տնտեսություններին կվաճառի 151 գլուխ տոհմային կենդանիներ, որից 81 գլուխ տոհմային ցուլիկներ, 38 գլուխ կովեր և 32 գլուխ երինջներ, իսկ տարեկան կիրացնի 810 տոննա կաթ, ինչպես նաև 57 տոննա միս (կենդանի զանգվածով):

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2017թ.
դեկտեմբերի 21-ի նիստի N 53
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ
ԿԻՍԱՆՐԲԱԳԵՂՄ ԿՈՐԻԴԵԼԻ ՏԻՊԻ ՈՉԽԱՐԻ ՏՈՀՄԱԲՈՒԾԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Պարենային անվտանգության տեսանկյունից, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետությունում անասնապահությունն ունի կարևոր ռազմավարական նշանակություն, որը հանդիսանում է կենդանական ծագման օրգանական սննդամթերքի ստացման հիմնական աղբյուր: Անասնապահությունն ապահովում է գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի 42.8%-ը:

2. 2016 թվականին հանրապետությունում անասնաբուծությունից ստացվել է 388.8 մլրդ դրամի համախառն արտադրանք, որի շուրջ 210 մլրդ դրամը կազմում է մսի, կաթի, ձվի և այլ արտադրանքի արտադրությունը: Անասնաբուծական մթերքների արտադրության ծավալում ոչխարաբուծությունից ստացվող մթերքի և հումքի արժեքը կազմում է դրա ընդամենը 10.5%-ը, մինչդեռ այս ոլորտի իրական հնարավորությունները մի քանի անգամ գերազանցում են այս ցուցանիշը:

3. Մեր հանրապետությունում այս ոլորտի զարգացումը պայմանավորված է ոչխարաբուծության վարման համար խիստ նպաստավոր բնակլիմայական պայմանների և առաջին հերթին, լեռնային արոտավայրերի ընդարձակ տարածքների առկայությամբ:

4. Թերևս դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ անցյալ դարի մինչև 80-ական թվականները ոչխարների թիվը կտրուկ ավելացավ, սակայն հետագայում պայմանավորված մի շարք հանգամանքներով, դրանց գլխաքանակը կտրուկ նվազեց:

5. Ներկայումս հանրապետությունում բուծվող ոչխարներից են հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի կրոսբրեդային բրդածածկով մսաբրդակաթնատու կենդանիները, որը ստեղծվել է հայ գիտնականների նպատակաուղղված տոհմասելեկցիոն աշխատանքի արդյունքում (1964 թվականից): Տիպի ստեղծման գլխավոր նպատակն է ավելացնել ոչխարամսի, կրոսբրեդային տիպի կիսանուրբ բրդի, ապրանքային կաթի և կաշեհումքի արտադրության ծավալները:

6. Վերջին տարիներին հանրապետությունից Իրանի Իսլամական Հանրապետություն կենդանի ոչխարների և/կամ ոչխարամսի արտահանման հաջողված փորձերը և արաբական մի շարք երկրների գործարարների կողմից հանրապետությունում աճեցված ոչխարների ձեռքբերման վերաբերյալ առաջարկությունները հուսալի երաշխիք են հանդիսանում այս ոլորտի ներդաշնակ զարգացման համար:

7. Վերոգրյալ հանգամանքները ոչխարաբուծությունը մեր հանրապետությունում կարող են դարձնել մրցունակ ոլորտ, իսկ արտահանման տեսանկյունից՝ անասնաբուծության ճյուղում առաջատար: Այսպես, 2017 թվականի հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունից արտահանվել է 17.1 հազար գլուխ մանր եղջերավոր կենդանի, ինչպես նաև 2563.3 տոննա մանր եղջերավոր կենդանու պաղեցրած միս:

8. Հաշվի առնելով ոչխարաբուծության վարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև արոտավայրերի արդյունավետ օգտագործման առաջնահերթությունն այժմէական է հանրապետությունում ավելացնել բարձրարժեք տոհմային կենդանիներով հագեցած հոտերի տեսակարար կշիռը, որն ունի կենսաբանական և արտադրատնտեսական կարևոր նշանակություն:

9. Ոչխարաբուծության զարգացումը մեր հանրապետությունում ենթադրում է համալիր միջոցառումների իրականացում, ինչը կնպաստի մի շարք ենթակառուցվածքների ձևավորմանը և մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես, հնարավորություն կընձեռի հիմնելու տոհմային կորիզ ունեցող ոչխարի հոտեր, ձևավորել ոչխարի բրդի և ոչխարենու մթերման կազմակերպություններ, ինչպես նաև

բարձրացնել գյուղական համայնքների վարչական տարածքներում գտնվող արոտավայրերի կառավարման արդյունավետությունը:

II. ՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

10. Հայաստանի Հանրապետությունում ոչխարաբուծությունը համարվում է անասնապահության ավանդական ճյուղերից մեկը, որը դարեր շարունակ բնակչությանը մատակարարել է բարձրորակ միս, կաթ, բուրդ և կաշեհումք: Հանրապետությունում ոչխարների առավելագույն գլխաքանակը հաշվառվել է 1982 թվականին և կազմել է շուրջ 2.2 մլն գլուխ:

11. Հայաստանի Հանրապետությունում բուծվում են կոպտաբուրդ (բալբաս, մազեխ, բոզախ, ղարաբաղյան) և կիսակոպտաբուրդ (հայկական կիսակոպտաբուրդ) ցեղերի ոչխարներ: Այլ ցեղերի հետ ներկայումս հանրապետությունում բուծվում են կիսանրբագեղմ մսաբրդատու կորիդելի տիպի կրոսբրեդային բրդաճաճկով մսաբրդակաթնատու ոչխարներ, որոնք ունեն կիսանուրբ բուրդ, աչքի են ընկնում բարձր մսային և բրդային մթերատվությամբ և 20-30%-ով գերազանցում են մյուս բուծվող ցեղերին, իսկ պտղատվությունը կազմում է 110%: Կորիդելի տիպի խոյերի հետ մաքիների տրամախաչման արդյունքում ստացված սերունդների կաթնատվությունը հասնում է մինչև 60 կգ-ի:

12. Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացված գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման, 2012 թվականի համեմատ 2017 թվականին ոչխարների գլխաքանակն աճել է 24.6%-ով կամ 138.0 հազար գլխով և կազմել է 699.6 հազար գլուխ, իսկ մաքիներինը՝ 477.8 հազար գլուխ:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետությունում ոչխարների գլխաքանակի, մսի և բրդի արտադրության դինամիկան, ըստ տարիների

Ցուցանիշը	Չափի միավոր	Տարիներ						2017թ./2012թ. նկատմամբ, %
		2012	2013	2014	2015	2016	2017	
Ոչխարներ	հազ գլուխ	561.6	645.7	687.1	713.9	747.3	699.6	**124.6**
Ոչխարի և այծի միս (սպանդային քաշով)	հազ տոննա	8.5	9.0	9.1	9.8	10.2	10.6*	**124.7**
Բուրդ (ֆիզիկական քաշով)	տոննա	1280	1426	1477	1571	1644	1540*	**120**
Մեկ ոչխարի միջին բրդատվությունը (ֆիզիկական քաշով)	կգ	2.2	2.2	2.2	2.2	2.2	2.2*	**100**

* ***Կանխատեսվող***

13. Անասնագլխաքանակի աճին զուգահեռ ավելացել է նաև մանր եղջերավոր կենդանիներից ստացվող մսի ծավալները՝ տարեկան միջինը 4.4%-ով: Կանխատեսվում է, որ 2017 թվականին ոչխարի և այծի մսի արտադրության ծավալները կկազմեն շուրջ 22.5 հազար տոննա կենդանի կամ 10.6 հազար տոննա սպանդային զանգվածով:

14. Հանրապետությունում մեկ ոչխարի տարեկան միջին բրդատվությունը կազմում է շուրջ 2.2 կգ (ֆիզիկական քաշով), իսկ բրդի արտադրության համախառն ծավալը՝ միջինը 1450 տոննա/տարի, որում հիմնականում գերակշռում են տարրասեռ՝ կոպիտ և կիսակոպիտ բրդատեսակները:

III. ԾՐԱԳՐԻ ՆԱՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

15. Ծրագրի գլխավոր նպատակը տոհմային գործունեությամբ զբաղվող տնտեսության ստեղծումն է, որտեղ համակարգված տոհմասելեկցիոն աշխատանքների միջոցով կիրականացվի հանրապետությունում բուծվող հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի բարձրարժեք տոհմային ոչխարների բուծում, տոհմային վաճառքի միջոցով տվյալ ցեղի բուծման համար առավել բարենպաստ բնակլիմայական պայմաններ ունեցող մարզերում ինչպես տոհմային, այնպես էլ հանրապետության մի շարք տնտեսություններում խառնածին ոչխարների բարդ վերարտադրական տրամախաչման միջոցով կորիդելի տիպի բարձր մթերատու հոտերի ձևավորում և բուծվող ոչխարների մթերատվության մակարդակի բարձրացում:

16. Ծրագրի խնդիրներն են՝

1) կիսանրբագեղմ կորիդելի տիպի մսաբրդային ուղղության ոչխարաբուծական տոհմաբուծարանի ստեղծում,

2) ոչխարների պտղատվության և մթերատվության բարձրացում,

3) ոչխարաբուծության վարման ինտենսիվ տեխնոլոգիայի ներդրում,

4) բնական կերհանդակների և արոտավայրերի արդյունավետ օգտագործում,

5) ճյուղի վարման արդյունավետության բարձրացման նպատակով մասնագիտացված խորհրդատվության իրականացում:

17. Խնդիրների լուծման քայլերը՝

1) մասնավոր ներդրողների մասնակցությամբ նոր տոհմաբուծարանի ստեղծում,

2) տոհմաբուծարանի տոհմային կորիզը ձևավորելու նպատակով կիսանրբագեղմ կորիդելի տիպի մսաբրդային ուղղության ոչխարների (շիշակներ, մաքիներ) տեղում ընտրություն և արտադրող խոյերի ներմուծում, տոհմասելեկցիոն աշխատանքների իրականացում (ընտրություն, զույգընտրություն, մաքրացեղ բուծում, տրամախաչումներ),

3) տիպին բնորոշ կենդանիների գենետիկական ամբողջ ներուժը արդյունավետ օգտագործելու և որակյալ արտադրանք (միս, բուրդ, կաթ) արտադրելու նպատակով անհրաժեշտ է պահվածքի և կերակրման ինտենսիվ և նորագույն տեխնոլոգիաների (կթի մեքենա, մեքենայական խուզ և այլն) ներդրում, ինչը հնարավոր է իրականացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից սուբսիդավորվող ցածր տոկոսադրույքով վարկերի նպատակային օգտագործմամբ,

4) կենդանիների նորմավորված, լիարժեք կերակրումն ապահովելու և միաժամանակ բարձրորակ, սակայն ցածր ինքնարժեքով ոչխարաբուծական արտադրանք ստանալու նպատակով առավել արդյունավետ կօգտագործվեն հանրապետության լեռնային և կտրտված արոտները, ինչպես նաև կերահանդակները,

5) Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից մատուցվող խորհրդատվական ծրագրերի մեջ կներառվեն նաև փոքր և միջին տնտեսություններին ոչխարաբուծական ճյուղի արդյունավետ վարմանն ուղղված թեմաներ:

IV. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

18. Կորիդելի տիպը հանդիսանում է կիսանրբագեղմ մսաբրդակաթնատու ուղղության ոչխարների ցեղ, որը հանրապետության տարածքում բուծվող այլ ոչխարների ցեղերի համեմատ ունի ավելի բարձր մթերատվություն և կաթնատվություն, իսկ կենդանիներն արդեն հարմարված են տեղի բնակլիմայական պայմաններին:

19. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մասնավոր տնտեսության բազայի վրա հիմնել տոհմաբուծարան, ինչը կարող են իրականացնել ինչպես անհատ ձեռներեցները, այնպես էլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, ինչպես նաև փակ և բաց բաժնետիրական ընկերությունները, որը տոհմային ոչխարներով համալրելու նպատակով

անհրաժեշտ է հանրապետություն ներկրել 15 գլուխ արտադրող խոյ (սովետական մսաբրդատու ցեղ), իսկ տեղական շուկայից գնել 300 գլուխ էգ հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի կենդանիներ (շիշակներ, մաքիներ) (աղյուսակ 2): Հետագայում նախատեսվում է տնտեսության հզորությունը հասցնել մինչև 500 գլխի:

20. Պետության մասնակցությունը նշված ծրագրին կայանալու է. տնտեսության հիմնական գործունեությանը նպաստող այլ ծրագրերի մեջ ընդգրկման, ծրագրի իրականացման մեխանիզմների մշակման, տոհմասելեկցիոն աշխատանքների, կենդանիների զուգավորման և ծնի օպտիմալ ժամկետների պլանավորման և իրականացման, պահվածքի և կերակրման ճիշտ տեխնոլոգիայի կիրառման վերաբերյալ համապատասխան խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև կենդանիների իրացման առավել շահավետ ժամկետների հստակեցման, մարզերում ըստ շրջանացման գլխաքանակի տեղաբաշխման գործընթացներում:

Աղյուսակ 2

Տոհմաբուծարանի ստեղծման համար անհրաժեշտ գլխաքանակը

Կենդանիները	**Գլխաքանակը,** գլուխ	**Արժեքը,** ՀՀ դրամ	**Ընդամենը**
Խոյեր	15	250000	3750000
Մաքիներ	300	180000	540000000
Ընդամենը կենդանիներ	**315**	-	**57,750,000**

21. Տոհմաբուծարանի ստեղծման համար անհրաժեշտ հիմնական միջոցների ընդհանուր արժեքը կազմում է 153.9 մլն ՀՀ դրամ (աղյուսակ 2; 3):

Աղյուսակ 3

Անհրաժեշտ հիմնական միջոցներ

Ցուցանիշներ	**Անհրաժեշտ մակերեսը,** $մ^2$	**Գումարը**	**Ընդամենը**
Անհրաժեշտ շինություններ	1334.6	50000	66,730,000
Անհրաժեշտ զբոսահրապարակ	1797	3000	5,391,000
Բեռնատար ավտոմեքենա	2	7,000,000	14,000,000
Սարքավորումներ (կթի մեքենա, խուզի մեքենա, խմոցներ)	-		10,000,000
Ընդամենը			**96,121,000**

22. Մսաբրդային ոչխարաբուծության գծով տոհմաբուծարանի ստեղծման աշխատանքները նպատակահարմար է իրականացնել կիսանրբագեղմ մսաբրդատու ոչխարաբուծության գոտում (ՀՀ Կոտայքի, ՀՀ Շիրակի, ՀՀ Գեղարքունիքի մարզեր):

23. Ելակետային տարում տոհմաբուծարանի համար անհրաժեշտ 300 գլուխ մայրական կազմն առաջարկվում է ձևավորել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանի Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսությունում առկա բարձր մթերատու կորիդելի տիպի ոչխարների բազայի վրա:

24. Տոհմաբուծարանի բնականոն գործընթացն արդյունավետ կազմակերպելու և բարձրորակ տոհմանյութ արտադրելու նկատառումներից ելնելով անհրաժեշտ է իրականացնել.

1) տնտեսությունում առկա կենդանիների համարակալում և անձնագրավորում,

2) ոչխարների ծնի մատյանի վարում, ծնի ժամանակ անհատական հաշվառում, գառների կշռում և դրանց նկարագրում, համարակալում,

3) ոչխարների բոնիտավորում, բրդի նմուշների ընտրում և բոնիտավորման անհատական մատյանների վարում, անհատական բոնիտավորման հաշվետվությունների կազմում,

4) գեղմերի անհատական հաշվառում, գեղմերի ընտրություն ֆիզիկատեխնիկական հետազոտությունների համար,

5) կենդանի զանգվածի, բրդատվության բրդի երկարության և որակի տվյալների անցկացում համապատասխան մատյաններում,

6) վաճառքի ենթակա տոհմային մատղաշի փաստաթղթերի ձևակերպում,

7) նախնական բոնիտավորման անցկացում,

8) արտադրող խոյերի վերջնական ստուգում և զույգընտրության պլանի կազմում,

9) մաքիների և մատղաշի հոտերի ձևավորում,

10) արտադրող խոյերի ու մաքիների, ըստ սերնդի որակի գնահատման ընտրություն,

11) մաքիների զուգավորման անցկացում և զուգավորման ժամանակ հաշվառման կազմակերպում,

12) կենդանիների մթերատվության և տոհմային ծառայության տվյալների գրանցում, խոյերի ու մաքիների անհատական տոհմային քարտերի լրացում, խոյերի, ըստ սերնդի որակի գնահատման տեղեկագրերի լրացում,

13) ստացված տվյալների ընդհանրացում և թվայնացում:

25. Կիրականացվի տնտեսությունում բուծվող տոհմային կորիզի պահպանում, վերանորոգման մատղաշի ընտրություն, ինչպես նաև տոհմային վաճառքի իրականացում, միաժամանակ վերարտադրության համար ոչ պիտանի կենդանիները կհանձնվեն մսի:

26. Տոհմաբուծական տնտեսությունը հանրապետության արդյունաբերական և գյուղացիական տնտեսություններին կմատակարարի բարձր մթերատու տոհմային կենդանիներ, որով և հիմք կդրվի հանրապետությունում տոհմային ոչխարաբուծության ստեղծմանը և զարգացմանը:

27. Հոտի կառուցվածքում արտադրող խոյերի տեսակարար կշիռը տատանվում է միջինը 3.8, մաքիներինը՝ 57.2, վերանորոգման շիշակներինը՝ 25.7, իսկ խոյիկներինը՝ 22 տոկոսների սահմաններում: Նախատեսվում է տոհմաբուծարանի վերջնական հզորությունը 2026 թվականին հասցնել միջինը 1000 գլխի, որտեղ մայրական կորիզը կկազմի 500 գլուխ: Աղյուսակ 4-ում ներկայացված է հոտի տարեկան շարժը 8 տարվա կտրվածքով:

Աղյուսակ 4

2018-2025 թվականների հոտի կառուցվածքը, գլուխ

Սեռահասակային խումբը	Տարիներ							
	12.2018	12.2019	12.2020	12.2021	12.2022	12.2023	12.2024	12.2025
Արտադրող խոյեր և փորձախոյեր	15	14	17	17	16	15	15	17
Մաքիներ	300	297	355	400	440	488	507	501
Վերանորոգման շիշակներ	-	144	145	173	196	215	239	248
Խոյիկներ	-	147	145	173	195	215	238	248
Ընդամենը	**315**	**602**	**662**	**763**	**847**	**933**	**999**	**1014**

28. Մաքիների գլխաքանակի հիման վրա որոշվում է արտադրող խոյերի և փորձախոյերի անհրաժեշտ գլխաքանակը՝ ելնելով մաքիների զուգավորման եղանակից:

Ձեռնքաշ զուգավորման եղանակի դեպքում, յուրաքանչյուր 40-50 գլուխ մաքու համար կպահանջվի մեկ գլուխ արտադրող խոյ, իսկ 100-120 գլուխ մաքու հաշվով՝ մեկ փորձախոյ:

29. Յուրաքանչյուր տարի նախատեսվում է խոտանել հասակավոր գխաքանակի 20-25%-ը, ինչից հետևում է, որ մաքիները տոհմաբուծարանում պահվելու են մինչև 5-6 տարեկան հասակը: Հաշվարկներն իրականացվել են պտղատվության միջին մակարդակը ընդունելով 110%:

30. Լակտացիայի ընթացքում յուրաքանչյուր մաքուց նախատեսվում է ստանալ 60 կգ ապրանքային կաթ (մաքիների կիթն անց է կացվելու արոտային շրջանի սկզբից մինչև գառներին մայրերից լրիվ անջատելը):

31. Հոտի վերանորոգումը պետք է կատարել գնման կամ մատղաշների խմբերից հասակավորների խումբ համապատասխան գլխաքանակի փոխադրումով: Այդ նպատակի համար պետք է ունենալ վերանորոգման մատղաշի անհրաժեշտ գլխաքանակ, որը գնահատվել է բոնիտավորման ժամանակ (13-15 ամսականում): Հոտի վերանորոգման համար առանձնացված մատղաշի գլխաքանակը 20-25%-ով պետք է գերազանցի պահանջվող գլխաքանակին:

32. Հոտի ընդունված կառուցվածքը համապատասխանում է ճյուղի ինտենսիվ վարման պահանջներին, իսկ վերարտադրության համար ոչ պիտանի մատղաշն իրացվում է ծնված տարում, որի դեպքում զգալիորեն բարձրանում է մթերքների արտադրությունը տարեսկզբի մեկ գլխի կամ մեկ մաքու հաշվով:

33. Տոհմաբուծարանի հոտի վերարտադրության համար ոչ պիտանի մատղաշն նախատեսվում է ընթացիկ տարում իրացնել որպես տոհմանյութ, դրանով իսկ համալրելով հանրապետությունում առկա հոտերը բարձրարժեք տոհմային կենդանիներով, ինչն իր հերթին կխթանի տոհմային վաճառքի ինստիտուտի ձևավորմանը և զարգացմանը:

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ

34. Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր հատվածի ներդրումների միջոցով, որը կազմում է 153.9 մլն ՀՀ դրամ՝ ներառյալ անհրաժեշտ շինությունները, հիմնական միջոցները և կենդանիների սահմանված քանակը, որից առաջին տարվա անհրաժեշտ գումարը կազմում է 112.8 մլն ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման տարբեր տարիներին, մասնավորապես, 3-րդ և 5-րդ տարիներին նախատեսվում է ևս 27.5-ական մլն ՀՀ դրամ ներդրումներ: Տոհմաբուծարանի գործունեության հինգերորդ տարվանից սկսված ֆերմայի գործառնական գործունեությունից առաջացած զուտ դրամական հոսքերը դառնում են դրական (աղ. 5):

Աղյուսակ 5

«Հայաստանի Հանրապետությունում կիսանրբագեղմ կորիդելի տիպի ոչխարի տոհմաբուծական տնտեսության ստեղծման ծրագրի» արդյունավետության հաշվարկ, ՀՀ դրամ

Ծրագրի արժեքը	**Տարեթիվը**							
	2018	**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**	**2024**	**2025**
Հիմնական միջոցներ	(55,060,500)	-	(27,530,250)	-	(27,530,250)	-	-	-
Կենդանիներ	(57,750,000)	-		-		-	-	-
Ընդամենը	**(112,810,500)**	**-**	**(27,530,250)**	**-**	**(27,530,250)**	**-**	**-**	**-**
Վաճառքից եկամուտ	**974,700**	**6,018,240**	**22,485,180**	**24,685,280**	**30,136,325**	**33,531,090**	**38,886,225**	**43,815,120**
Կոմունալ ծախսեր	(265,637)	(660,561)	(860,094)	(973,446)	(1,099,339)	(1,207,739)	(1,323,636)	(1,391,785)
Կեր	(3,032,211)	(8,328,352)	(9,374,614)	(10,800,598)	(12,035,113)	(13,262,054)	(14,268,025)	(14,574,392)
Աշխատավարձ	(4,300,000)	(4,766,667)	(4,766,667)	(4,766,667)	(4,766,667)	(5,566,667)	(5,566,667)	(5,566,667)
Ընդամենը տարեկան ելք	**(7,597,847)**	**(13,755,579)**	**(15,001,374)**	**(16,540,711)**	**(17,901,119)**	**(20,036,460)**	**(21,158,328)**	**(21,532,844)**
Այլ Ծախսեր	(2,000,000)	(449,446)	(511,735)	(588,702)	(656,723)	(723,490)	(779,583)	(798,309)
Այլ գործառնական ծախսեր	(961,210)	(961,210)	(961,210)	(961,210)	(961,210)	(961,210)	(961,210)	(961,210)
Ընդամենը դրամական ներհոսք	974,700	6,018,240	22,485,180	24,685,280	30,136,325	33,531,090	38,886,225	43,815,120
Ընդամենը դրամական արտահոսք	(10,559,057)	(15,166,235)	(16,474,320)	(18,090,623)	(19,519,052)	(21,721,159)	(22,899,121)	(23,292,363)
Զուտ դրամական ընթացիկ հոսքեր	**(9,584,357)**	**(9,147,995)**	**6,010,860**	**6,594,657**	**10,617,273**	**11,809,931**	**15,987,104**	**20,522,757**
Զուտ դրամական ընդհ. հոսքեր	**(122,394,857)**	**(9,147,995)**	**(21,519,390)**		**(16,912,977)**	-	-	-
Ետգնման ժամկետայնություն, տարի	**13. 6**							

35.Ծրագրի բոլոր ժամանակահատվածների համար պահպանման միավոր ծախսերը միավոր հաշվարկով անփոփոխ են և հաշվարկված են 2017 թվականի գներով, ոչխարամսի 1 կգ-ի գինը ընդունված է 2100 ՀՀ դրամ, ոչխարի կաթինը՝ 200 ՀՀ դրամ, իսկ բրդինը՝ 1000 ՀՀ դրամ, արոտավայրի 1 հա-ի վարձակալության վճարը՝ 4000 ՀՀ դրամ, խոտի 1 կգ-ի ինքնարժեքը՝ 35 ՀՀ դրամ, սիլոսինը՝ 11 ՀՀ դրամ, իսկ խտացրած կերինը՝ 125 ՀՀ դրամ:

36.Գները հաշվարկված են ելնելով այն հանգամանքից, որ տոհմաբուծարանը պետք է ունենա սեփական կերարտադրություն:

37.Ծրագրի ետգնման ժամկետայնությունը 13.6 տարի է: Տնտեսությունը 7-րդ տարվանից սկսած գործում է իր ամբողջ ներուժով՝ դրամական զուտ հոսքերը հասցնելով տարեկան 20.5 մլն ՀՀ դրամի, որը կպահպանվի հաջորդող տարիների ընթացքում:

38.Կերի ծախսն ընդհանուր ծախսերի հաշվարկի մեջ կազմում է միջինը 60%:

VI. ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

39. Մասնավոր հատվածի հետ համագործակցության արդյուքնում հանրապետությունում կստեղծվի կիսանրբագեղմ կորիդելի տիպի ոչխարի տոհմաբուծարան, որն ունենալով կարևոր ռազմավարական նշանակություն, հնարավորություն կընձեռի որակապես բարելավել հանրապետության հոտերը, դրանք համալրելով տոհմասելեկցիոն նպատակաուղղված աշխատանքի արդյունքում ստացված տոհմամթերատու բարձր հատկանիշներով օժտված կենդանիներով:

40. Տոհմաբուծարանի ստեղծումը կնպաստի հայ գիտնականների կողմից ստեղծված կիսանրբագեղմ կորիդելի տիպի ոչխարների գենոֆոնդի պահպանմանը և բարելավմանը, որի արդյունքում ստացված ցանկալի տիպի սերունդն օժտված կլինի բարձր մթերատվության և պտղատվության ցուցանիշներով, որը հնարավորություն կտա ոչխարաբուծության ոլորտը դարձնել առավել արդյունավետ:

41. Տոհմաբուծարանի ստեղծումը կնպաստի հանրապետությունում տոհմային վաճառքի ինստիտուտի կայացմանը:

42. Տոհմաբուծարանի գործունեության արդյունքում մինչև 2025 թվականը հանրապետությունում կիրականացվի 2283 գլուխ կիսանրբագեղմ կորիդելի տիպի տոհմային ոչխարների վաճառք (տարեկան շուրջ 285 գլուխ), ինչպես նաև նշված ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ կարտադրվի շուրջ 6.5 տոննա ոչխարամիս (13.6 մլն ՀՀ դրամ) և շուրջ 170 տոննա ոչխարի կաթ (33.9 մլն ՀՀ դրամ), մինչդեռ սկսած 2025 թվականից ոչխարամսի և կաթի տարեկան արտադրությունը կկազմի համապատասխանաբար՝ 1.0 և 25.2 տոննա, իսկ տոհմային վաճառքը՝ շուրջ 450 գլուխ:

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2017թ.
դեկտեմբերի 21-ի նիստի N 53
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
Կ Ի Ս Ա Ն Ր Բ Ա Գ Ե Ղ Մ Ս Ո Ւ Ֆ Ֆ Ո Լ Կ Ց Ե Ղ Ի Ո Զ Խ Ա Ր Ի Տ Ո Հ Մ Ա Բ Ո Ւ Ծ Ա Ր Ա Ն Ի Ս Տ Ե Ղ Ծ Մ Ա Ն Ե Վ Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն

Ի.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.Հայաստանի Հանրապետությունում մսի արտադրության ծավալների ավելացման, երկրի բնական կերահանդակների արդյունավետ օգտագործման, կենդանի ոչխարների, ինչպես նաև ոչխարամսի նկատմամբ արտաքին շուկայում առկա բարձր պահանջարկի պայմաններում, ենթաճյուղի զարգացումը հանրապետությունում հանդիսանում է անհետաձգելի խնդիր:

2.Սույն ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետությունում մսի արտադրության ավելացման, երկրի բնական կերահանդակների արդյունավետ օգտագործման, կենդանի ոչխարների արտահանման ծավալների ավելացմանը:

3.2011-2017 թվականներին Հայաստանի Հանրապետությունից արտահանվել է 457.5 հազար գլուխ մանր եղջերավոր կենդանի և 6054.4 տոննա պաղեցրած ոչխարամիս: Արտահանվել են հիմնականում Իրանի Իսլամական Հանրապետություն, Իրաք, Օման, Քուվեյթ, Կատար, Լիբանան, Վրաստան, ինչպես նաև քիչ քանակությամբ Արաբական Միացյալ Էմիրություններ:

4. Հայաստանի Հանրապետությունում բուծվում են կոպտաբուրդ (բալբաս, մազեխ, բոզախ, ղարաբաղյան), կիսակոպտաբուրդ (հայկական կիսակոպտաբուրդ), ինչպես նաև կիսանրբագեղմ մսաբրդատու (հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպ) ցեղերի ոչխարներ:

5.Հանրապետությունում բուծվող ոչխարներն ունեն տեղի բնակլիմայական պայմաններին բարձր հարմարվողականություն, սակայն ելնելով ներկայումս կենդանի ոչխարների և ոչխարամսի նկատմամբ արտերկրում առկա և օրեցօր ավելացող պահանջարկից, անհրաժեշտություն է առաջացել բարելավել տեղական ոչխարների սերնդատվության, ինչպես նաև կենդանիների վաղահասության ցուցանիշները:

6.Նշված գործընթացն արդյունավետ իրագործելու համար անհրաժեշտ է իրականացնել տոհմասելեկցիոն համապատասխան միջոցառումներ, որպես բարելավող կենդանիներ օգտագործելով բարձր մթերատու և արտադրատնտեսական հատկություններով օժտված տոհմային կենդանիներ:

7.Սույն ծրագրի շրջանակներում առաջարկվում է Հայաստանի Հանրապետություն ներկրել սուֆֆոլկ ցեղի բարձրարժեք տոհմային կենդանիներ և հիմնել տոհմաբուծական տնտեսություն, որտեղ կիրականացվի ներկրված կենդանիների «մաքրացեղ» բուծում և ստացված սերունդների տոհմային վաճառք:

8.Սուֆֆոլկ ցեղի ոչխարներն օժտված են մսային բարձր հատկություններով և առանձնանում են պտղատվության բարձր մակարդակով, ինչի շնորհիվ դրանք հաջողությամբ օգտագործվում են տարբեր երկրներում բուծվող տեղական ցեղերի ոչխարների մթերատվության բարելավման նպատակով:

9. Տոհմաբուծարանի գործունեության արդյունքում ստացված և տոհմային վաճառքի միջոցով իրացված կենդանիները հետագայում լայնորեն կօգտագործվեն տարբեր ձևաչափերով տրամախաչումների մեջ, ինչի արդյունքում հանրապետության գրեթե բոլոր մարզերում կձևավորվեն, ինչպես արդյունաբերական հոտեր, այնպես էլ կստացվեն «ցանկալի տիպի» խառնածիններ, որոնց հետ ևս կտարվի համապատասխան տոհմասելեկցիոն աշխատանքներ:

10.Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ոչխարաբուծության համար հանրապետությունում առկա բնակլիմայական բարենպաստ պայմանները, ավանդույթները և դարերի ընթացքում ձեռք բերված փորձը՝ Հայաստանի Հանրապետությունն ունի բավարար ներուժ տվյալ շուկայում ներկայանալու որպես կարևոր խաղացող և զբաղեցնելու մրցակցային առաջատար դիրքեր:

II. ՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

11.Հայաստանի Հանրապետությունում ոչխարաբուծությունը համարվում է անասնապահության ավանդական ճյուղերից մեկը, որը դարեր շարունակ բնակչությանը մատակարարել է բարձրորակ միս, կաթ, բուրդ և կաշեհումք: Հանրապետությունում ոչխարների առավելագույն գլխաքանակը հաշվառվել է 1982 թվականին և կազմել է շուրջ 2.2 մլն գլուխ:

12.Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացված գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման, 2012 թվականի համեմատ 2017 թվականին ոչխարների գլխաքանակը տարեսկզբի դրությամբ աճել է 24.6%-ով կամ 138.0 հազար գլխով և կազմել է 699.6 հազար գլուխ, իսկ մաքիներինը՝ 477.8 հազար գլուխ:

13.Անասնագլխաքանակի աճին զուգահեռ ավելացել է նաև մանր եղջերավոր կենդանիներից ստացվող մսի ծավալները՝ տարեկան միջինը 4.4%-ով: Կանխատեսվում է, որ 2017 թվականին ոչխարի և այծի մսի արտադրության ծավալները կկազմեն շուրջ 22.5 հազար տոննա կենդանի կամ 10.6 հազար տոննա սպանդային զանգվածով (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետությունում ոչխարների գլխաքանակի, մսի և բրդի արտադրության դինամիկան ըստ տարիների

Ցուցանիշը	Չափի միավոր	Տարին						2017թ./2012թ. նկատմամբ,%
		2012	2013	2014	2015	2016	2017	
Ոչխարներ	հազար գլուխ	561.6	645.7	687.1	713.9	747.3	699.6	**124.6**
Ոչխարի և այծի միս (սպանդային քաշով)	հազար տոննա	8.5	9.0	9.1	9.8	10.2	10.6*	**124.7**
Բուրդ (ֆիզիկական քաշով)	տոննա	1280	1426	1477	1571	1644	1540*	**120**
Մեկ ոչխարի միջին բրդատվությունը (ֆիզիկական քաշով)	կգ	2.2	2.2	2.2	2.2	2.2	2.2*	**100**

* ***Կանխատեսվող***

14. Հանրապետությունում մեկ ոչխարի տարեկան միջին բրդատվությունը կազմում է շուրջ 2.2 կգ (ֆիզիկական քաշով), իսկ բրդի արտադրության համախառն ծավալը՝ միջինը 1450 տոննա/տարի, որում հիմնականում գերակշռում են տարրասեռ՝ կոպիտ և կիսակոպիտ բրդատեսակները:

15.Սակայն, պայմանավորված բրդի վերամշակման եթակառուցվածքների բացակայությամբ, հանրապետությունում արտադրված բուրդը վերամշակվում է աննշան քանակությամբ, իսկ ոչխարների բրդածածկի որակի բարելավման նպատակով տոհմասելեկցիոն նպատակաուղղված աշխատանքներ գրեթե չեն իրականացվում:

Աղյուսակ 2

2011-2017 թվականներին Հայաստանի Հանրապետությունից արտահանված կենդանի ոչխարների և ոչխարամսի ծավալները

Ապրանքը	Չափման միավորը	Տարին							Ընդամենը
		2011	2012	2013	2014	2015	2016	2017 (01.01.-01.11)	
Մանր եղջերավոր կենդանի	գլուխ	114100	60925	118409	86550	49372	10114	17986	**457456**
Պաղեցրած ոչխարամիս	տոննա	-	-	0.9	307.7	706.9	2369	2670.1	**6054.4**

16.Ուսումնասիրելով հանրապետությունից մանր եղջերավոր կենդանիների մասնավորապես, կենդանի ոչխարների և/կամ ոչխարամսի արտահանման վերջին տարիների տվյալները, կարելի է եզրակացնել, որ նշված մթերքը արտաքին շուկայում ունի մեծ պահանջարկ: Այսպիսով, 2011-2017 թվականներին հանրապետությունից ընդհանուր առմամբ արտահանվել է 457.5 հազար գլուխ մանր եղջերավոր կենդանիներ և ավելի քան 6054 տոննա պաղեցրած մանր եղջերավորի միս (աղյուսակ 2):

17. Կենդանի մանր եղջերավոր կենդանիների արտահանման ծավալների առավել բարձր ցուցանիշ արձանագրվել է 2013 թվականին՝ 118.4 հազար գլուխ այն դեպքում, որ պաղեցրած մանր եղջերավոր կենդանու մսի նվազագույն ծավալն (0.9 տոննա) արտահանվել է նույն 2013 թվականին:



Գծապատկեր 1. Մանր եղջերավոր կենդանիների և դրանցից ստացված պաղեցրած մսի արտահանման ծավալների համեմատությունը, ըստ տարիների

18. Վերջին տարիներին հանրապետությունից արտահանված մանր եղջերավոր կենդանի կենդանիների և դրանցից ստացված պաղեցրած մսի ծավալների համեմատումից պարզ է դառնում, որ մանր եղջերավոր կենդանի կենդանիների գլխաքանակի արտահանման

ծավալները հակառակ համեմատական են նույն տեսակի կենդանիներից ստացված պաղեցրած մսի արտահանման ծավալներին (գծապատկեր 1):

19.Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակումների, հանրապետությունում վերջին յոթ տարիների ընթացքում 1 կգ ոչխարամսի սպառողական գինը կազմել է միջինը 3076 ՀՀ դրամ (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Մանր եղջերավոր կենդանիներից ստացված պաղեցրած մսի միջին սպառողական գինը, ըստ տարիների (ՀՀ ԱՎԾ), ՀՀ դրամ

20.Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ոչխարամսի ամենաբարձր գինն արձանագրվել է 2012 և 2011 թվականներին, իսկ 2016 թվականին գրանցվել է 9.1% կամ 252 ՀՀ դրամ գնանկում (2015-2016 թվականներ): Ի համեմատ 2016 թվականի, 2017 թվականի առաջին կիսամյակում ոչխարամսի գինն աճել է 6.7%-ով կամ 186 ՀՀ դրամով:

21.Հանրապետությունում ոչխարամսի գնի տատանումները ևս կարգավորվում են առաջարկի և պահանջարկի սկզբունքով, սակայն ինչպես անասնաբուծության բոլոր ճյուղերում, այնպես էլ՝ ոչխարաբուծությունում արտադրանքի ինքնարժեքը մեծապես պայմանավորված է միավոր արտադրանքի վրա ծախսված կերերի քանակով և արժեքով:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

22.Ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետություն բարձր տոհմամթերատու հատկանիշներով օժտված սուֆֆոլկ ցեղի տոհմային ոչխարների ներմուծումը և տոհմաբուծարանի հիմնումն է, ինչպես նաև հանրապետությունում բուծվող ոչխարների տեղական ցեղերի հետ տարբեր ձևաչափերով տրամախաչումների իրականացման միջոցով վերջիններիս արտադրատնտեսական և տոհմամթերատու հատկանիշների բարելավման արդյունքում հանրապետությունից արտահանվող կենդանի ոչխարների և ոչխարամսի ծավալների ավելացումը:

23.Ծրագրի խնդիրներն են՝

1) կիսանրբագեղմ սուֆֆոլկի տիպի տոհմաբուծարանի ստեղծում,
2) տեղում բուծվող ոչխարների մսային մթերատվության բարձրացում,
3)ոչխարաբուծության վարման ինտենսիվ տեխնոլոգիայի ներդրում,

4) տոհմաբուծարանի բազայի վրա դուստր տնտեսությունների ստեղծման նախադրյալների ստեղծում,

5)բնական կերահանդակների և արոտավայրերի արդյունավետ օգտագործում,

6)ճյուղի վարման արդյունավետության բարձրացման նպատակով մասնագիտացված խորհրդատվության իրականացում: Այս առումով ներկայումս ծրագրի նկատմամբ հետաքրքրություն է ցուցաբերվել «Sodial International» և «Genoservice» ընկերությունների կողմից:

24.Խնդիրների լուծման քայլերը՝

1)մասնավոր ներդրողների միջոցներով նոր տոհմաբուծարանի ստեղծում, արտերկրից Հայաստանի Հանրապետություն բարձրարժեք տոհմային մաքիների և խոյերի ներկրում,

2)տոհմային վաճառքի կազմակերպում, տոհմասելեկցիոն աշխատանքների իրականացում (ընտրություն, զույգընտրություն, մաքրացեղ բուծում, տրամախաչումներ),

3)սուֆֆոլկ ցեղի գենետիկական ներուժը լիարժեք օգտագործելու նպատակով կերակրման և պահվածքի նոր տեխնոլոգիաների մշակում և ներդրում,

4)տրամախաչումների արդյունքում ստացված տարբեր սերնդի խառնացեղ կենդանիների արտադրատնտեսական ցուցանիշների ուսումնասիրում և արդյունքների հանրայնացում,

5)կենդանիների նորմավորված, լիարժեք կերակրումն ապահովելու և միաժամանակ բարձրորակ, սակայն ցածր ինքնարժեքով ոչխարաբուծական արտադրանք ստանալու նպատակավ հանրապետության լեռնային և կտրտված արոտների առավել արդյունավետ օգտագործում,

6) Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից մատուցվող խորհրդատվական ծրագրերի մեջ փոքր և միջին տնտեսություններին ոչխարաբուծական ճյուղի արդյունավետ վարմանն ուղղված թեմաների ներառում:

IV.ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

25.Սուֆֆոլկ ցեղը ստեղծվել է Անգլիայում՝ 18-րդ դարում, իսկ 1810 թվականից հաստատվել է որպես ինքնուրույն ցեղ: Այդ ժամանակվանից էլ արագ տարածվել է Եվրոպական աշխարհամասում, որից հետո Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, Ավստրալիայում, Ռուսաստանում: Այն առաջատար դեր ունի ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի ոչխարաբուծությունում, որտեղ դրանք համարվում են բարձրորակ ոչխարամսի արտադրության աղբյուր:

26.Սուֆֆոլկ ցեղը մսային ուղղության աշխարհի լավագույն ցեղերից է, կենդանիները վաղահաս են, պահանջկոտ չեն, օժտված են բարձր դիմադրողականությամբ, կայուն են հիվանդությունների և վերջույթների հիվանդությունների նկատմամբ, ունեն բարձր հարմարվողականություն և հարմարվում են տարբեր բնակլիմայական և տնտեսական պայմաններին, օժտված են բարձր ծնելիությամբ և տնտեսական օգտագործման երկարակեցությամբ:

Նկար 1. Սուֆֆոլկ ցեղի մաքի

27.Այս ցեղը առանձնանում է պտղատվության բարձր մակարդակով, որը կազմում է միջինը 150-160% (100 մայրի հաշվով ստացվում է 130-190 գառ), որով պայմանավորված դրանք լայնորեն օգտագործվում են միջցեղային տրամախաչումների ժամանակ՝ խառնացեղերի ստացման և առավել բարձրորակ գառան մսի արտադրության նպատակով:

28.Լիատարիք խոյերը միջինը կշռում են 105-140 կգ, մաքիները՝ 70-100 կգ, 4 ամսական գառները՝ 37-44 կգ, գառները ծնվում են 5.0-7.7 կգ կենդանի զանգվածով: Չորս ամսական գառների մսեղիքը կշռում է 26-28 կգ, միջին օրական քաշաճը՝ 280-400 գրամ:

29.Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մասնավոր ներդրումների միջոցով հիմնել տոհմաբուծարան, որը կարող են իրականացնել անհատ ձեռներեցները, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, ինչպես նաև փակ և բաց բաժնետիրական ընկերությունները: Սուֆֆոլկ ցեղի տոհմային ոչխարներով համալրելու նպատակով անհրաժեշտ է հանրապետություն ներկրել 20 գլուխ արտադրող խոյ և 500 գլուխ էգ կենդանիներ (աղյուսակ 3): Հետագայում նախատեսվում է տոհմաբուծական տնտեսության ընդհանուր գլխաքանակը հասցնել մինչև 2300 գլխի, այդ թվում՝ մաքիների գլխաքանակը՝ շուրջ 1000 գլխի:

30.Պետության մասնակցությունը նշված ծրագրին կայանալու է. տնտեսության հիմնական գործունեությանը նպաստող այլ ծրագրերի մեջ ընդգրկման, ծրագրի իրականացման մեխանիզմների մշակման, տոհմասելեկցիոն աշխատանքների, կենդանիների զուգավորման և ծնի օպտիմալ ժամկետների պլանավորման և իրականացման, պահվածքի և կերակրման ճիշտ տեխնոլոգիայի կիրառման վերաբերյալ համապատասխան խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև կենդանիների իրացման առավել շահավետ ժամկետների հստակեցման, մարզերում ըստ շրջանացման գլխաքանակի տեղաբաշխման գործընթացներում:

Աղյուսակ 3

Տոհմաբուծարանի ստեղծման համար անհրաժեշտ գլխաքանակը

Կենդանիները	**Գլխաքանակը,** գլուխ	**Արժեքը,** ՀՀ դրամ	**Ընդամենը**
Խոյեր	20	385000	7700000
Մաքիներ	500	308000	154000000
Ընդամենը կենդանիներ	**520**	-	**161700000**

31.Տոհմաբուծարանի ստեղծման համար անհրաժեշտ հիմնական միջոցների ընդհանուր արժեքը կազմում է 324.5 մլն ՀՀ դրամ (աղ. 3; 4), այդ թվում՝ 161.7 մլն ՀՀ դրամ անհրաժեշտ կենդանիներ և 162.8 մլն ՀՀ դրամ շենք, շինություն, բեռնատարներ:

Աղյուսակ 4

Անհրաժեշտ հիմնական միջոցներ

Ցուցանիշներ	**Անհրաժեշտ մակերեսը,** մ^2	**Գումարը**	**Ընդամենը**
Անհրաժեշտ շինություններ	2744	50000	137200000
Անհրաժեշտ զբոսաիրապարակ	3860	3000	11580000
Բեռնատար ավտոմեքենա	2	7000000	14000000
Ընդամենը			**162780000**

32.Հանրապետություն ներկրված տոհմային բարձրարժեք սուֆֆոլկ ցեղի ոչխարների գենոֆոնդի պահպանման նպատակով անհրաժեշտ է տոհմաբուծարանում կիրառել դրանց «մաքրացեղ» բուծում (նկար 2), որը հնարավորություն կտա նաև կարճ ժամանակահատվածում հանրապետության այլ մարզերի (ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Արագածոտնի, ՀՀ Շիրակի, ՀՀ Սյունիքի) ոչխարաբուծական տնտեսություններին վաճառել տեղական վերարտադրության մաքրացեղ սուֆֆոլկ ցեղի շիշակներ և խոյիկներ, իսկ հետագայում նաև այդ գոտիներում ստեղծել դուստր տոհմաբուծարաններ:



Նկար 2. Սուֆֆոլկ ցեղի ոչխարների «մաքրացեղ» բուծման սխեմա

33.Միաժամանակ, հանրապետությունում բուծվող տեղական ցեղերի մաքիների պտղատվության բարձրացման և մսային հատկությունների բարելավման գործընթացն արագացնելու նպատակով, առաջարկվում է տոհմաբուծարանում իրականացնել նաև վերջիններիս բարելավմանը միտված տրամախաչումներ, որպես բարելավող օգտագործելով ներկրված սուֆֆոլկ ցեղի մաքրացեղ արտադրող խոյերին (նկար 3):



Նկար 3. Սուֆֆոլկ ցեղի խոյերի և տեղում բուծվող մաքիների տրամախաչման սխեմա

34.Տոհմաբուծարանում իրականացվող տոհմասելեկցիոն համակարգված աշխատանքների շրջանակներում կիրականացվի տնտեսությունում բուծվող կենդանիների հաշվառում՝ համարակալում և անձնագրավորում, տոհմային կորիզի պահպանում, բուծվող կենդանիների ընտրություն և զույգընտրություն, զուգավորման և ծնի ժամկետների պլանավորում և իրականացում, վերանորոգման մատղաշի ընտրություն, անասնաբուժական միջոցառումների անցկացում, ինչպես նաև տոհմային վաճառքի իրականացում, միաժամանակ վերարտադրության համար ոչ պիտանի կենդանիների իրացում մսի:

35.Հոտի կառուցվածքում արտադրող խոյերի (այդ թվում՝ փորձախոյերի) տեսակարար կշիռը տատանվում է միջինը 2.2, մաքիներինը՝ 51.6, վերանորոգման շիշակները՝ 26.0, իսկ խոյիկներինը՝ 26.0 տոկոսների սահմաններում: Նախատեսվում է տոհմաբուծարանի վերջնական հզորությունը 2025 թվականին հասցնել մինչև 2305 գլխի, որտեղ մայրական կորիզը կկազմի շուրջ 1000 գլուխ: Աղյուսակ 5-ում ներկայացված է հոտի տարեկան շարժը 9 տարվա կտրվածքով:

Աղյուսակ 5

2018-2025 թվականների հոտի կառուցվածքը, գլուխ

Սեռահասակային խումբը	**Տարին** (դեկտեմբերի դրությամբ)							
	2018	**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**	**2024**	**2025**
Արտադրող խոյեր և փորձախոյեր	20	19	32	47	44	46	43	43
Մաքիներ	500	495	729	849	1007	1006	1007	1008
Վերանորոգման շիշակներ	-	284	309	453	528	628	627	628
Խոյիկներ	-	289	308	452	527	626	625	626
Ընդամենը	**520**	**1087**	**1378**	**1801**	**2106**	**2306**	**2302**	**2305**

36.Պայմանավորված մաքիների գլխաքանակով, արտադրող խոյերի և փորձախոյերի գլխաքանակը տատանվում է 20-ից մինչև 44 գլխի սահմաններում, այն հաշվարկով, որ մեկ արտադրող խոյի կամ փորձախոյի տարեկան ծանրաբեռնվածությունը կազմի միջինը 23 գլուխ մաքի:

37.Յուրաքանչյուր տարի նախատեսվում է խոտանել հասակավոր գխաքանակի 20-25%-ը, ինչից հետևում է, որ մաքիները տոհմաբուծարանում պահվելու են մինչև 5-6 տարեկան հասակը: Հաշվարկներն իրականացվել են պտղատվության միջին մակարդակը ընդունելով 130-140%:

38.Հոտի վերանորոգումը պետք է կատարել գնման կամ մատղաշների խմբերից հասակավորների խումբ համապատասխան գլխաքանակի փոխադրումով: Այդ նպատակի համար պետք է ունենալ վերանորոգման մատղաշի անհրաժեշտ գլխաքանակ, որը գնահատվել է բոնիտավորման ժամանակ (13-15 ամսականում): Հոտի վերանորոգման համար առանձնացված մատղաշի գլխաքանակը 20-25%-ով պետք է գերազանցի պահանջվող գլխաքանակին:

39.Հոտի ընդունված կառուցվածքը համապատասխանում է ճյուղի ինտենսիվ վարման պահանջներին, իսկ վերարտադրության համար ոչ պիտանի մատղաշն իրացվում է ծնված տարում, որի դեպքում, զգալիորեն բարձրանում է մթերքների արտադրությունը տարեսկզբի մեկ գլխի կամ մեկ մաքու հաշվով:

40.Տոհմաբուծարանում առկա հոտի վերարտադրության համար ոչ պիտանի մատղաշը նախատեսվում է ընթացիկ տարում իրացնել որպես տոհմանյութ, դրանով իսկ համալրելով հանրապետությունում առկա հոտերը բարձրաժեք տոհմային կենդանիներով, ինչն իր հերթին կխթանի տոհմային վաճառքի ինստիտուտի ձևավորմանն ու զարգացմանը:

41.Վերջապես, տոհմաբուծական տնտեսությունը հանրապետության արդյունաբերական և գյուղացիական տնտեսություններին կմատակարարի ինչպես բարձրարժեք տոհմային կենդանիներ, այնպես էլ՝ տարբեր սերունդների բարձր մթերատու հատկություններով օժտված խառնածին կենդանիներ, որը բարենպաստ նախադրյալներ կստեղծի Հայաստանի Հանրապետությունում տոհմային ոչխարաբուծության հետագա զարգացման համար:

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ

42.Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր հատվածի ներդրումների միջոցով, որը կազմում է 324.5 մլն ՀՀ դրամ՝ ներառյալ անհրաժեշտ շինությունները, հիմնական միջոցները և կենդանիների սահմանված քանակը, որից առաջին տարվա անհրաժեշտ գումարը կազմում է 243.1 մլն ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման 2-րդ և 3-րդ տարիներին նախատեսվում է ևս 40.695-ական մլն ՀՀ դրամ ներդրումներ: Տոհմաբուծարանի գործունեության չորրորդ տարվանից սկսած ֆերմայի գործառնական գործունեությունից առաջացած զուտ դրամական հոսքերը դառնում են դրական (աղ. 6):

Ծրագրի բոլոր ժամանակահատվածների համար պահպանման միավոր ծախսերը միավոր հաշվարկով անփոփոխ են և հաշվարկված են 2017 թվականի գներով, ոչխարամսի 1 կգ-ի գինը ընդունված է 2100 ՀՀ դրամ, բրդինը՝ 1000 ՀՀ դրամ, արոտավայրի 1 հա վարձակալության վճարը 4000 ՀՀ դրամ, խոտի 1 կգ-ի ինքնարժեքը (հաշվարկները կատարվել են ինքնարժեքով, քանի որ նախատեսվում է, որ ֆերման պետք է ունենա սեփական կերի բազայի համար անհրաժեշտ վարելահողերը)՝ 35 ՀՀ դրամ, սիլոսինը՝ 11 ՀՀ դրամ, իսկ խտացրած կերի գինը՝ 125 ՀՀ դրամ:

43.Գները հաշվարկված են ելնելով այն հանգամանքից, որ տոհմաբուծարանը պետք է ունենա սեփական կերարտադրություն:

Աղյուսակ 6

«Կիսանրբագեղմ սուֆֆոլկի տիպի ոչխարի տոհմաբուծական տնտեսության ստեղծման ծրագրի» արդյունավետության հաշվարկ, ՀՀ դրամ

Ծրագրի արժեքը	**Տարեթիվը**							
	2018	**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**	**2024**	**2025**
Հիմնական միջոցներ	81,390,000	40,695,000	40,695,000	-	-	-	-	-
Կենդանիներ	161,700,000	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	**243,090,000**	**40,695,000**	**40,695,000**	-	-	-	-	-
Վաճառքից եկամուտ, ՀՀ դրամ	**592,800**	**4,969,675**	**37,333,745**	**60,889,780**	**90,413,835**	**114,867,010**	**134,127,940**	**133,775,685**
Անհրաժեշտ միջոցներ	(396,340)	(1,141,947)	(1,594,094)	(2,141,666)	(2,621,532)	(3,057,836)	(3,194,072)	(3,192,843)
Կեր	(4,973,301)	(15,809,759)	(20,117,095)	(26,428,070)	(31,097,794)	(34,333,129)	(34,488,945)	(34,522,676)
Աշխատավարձ	(12,920,000)	(12,920,000)	(12,920,000)	(12,920,000)	(14,520,000)	(14,520,000)	(14,520,000)	(14,520,000)
Ընդամենը տարեկան ելք	**(18,289,641)**	**(29,871,706)**	**(34,631,189)**	**(41,489,736)**	**(48,239,326)**	**(51,910,966)**	**(52,203,018)**	**(52,235,519)**
Այլ Ծախսեր	(2,000,000)	(847,585)	(1,085,559)	(1,428,487)	(1,685,966)	(1,869,548)	(1,884,151)	(1,885,776)
Այլ գործառնական ծախսեր	(1,627,800)	(1,627,800)	(1,627,800)	(1,627,800)	(1,627,800)	(1,627,800)	(1,627,800)	(1,627,800)
Ընդամենը դրամական ներհոսք	592,800	4,969,675	37,333,745	60,889,780	90,413,835	114,867,010	134,127,940	133,775,685
Ընդամենը դրամական արտահոսք	(21,917,441)	(32,347,092)	(37,344,549)	(44,546,023)	(51,553,092)	(55,408,314)	(55,714,969)	(55,749,095)
Զուտ դրամական ընթացիկ հոսքեր	**(21,324,641)**	**(27,377,417)**	**(10,804)**	**16,343,757**	**38,860,743**	**59,458,696**	**78,412,971**	**78,026,590**
Ընդամենը Զուտ դրամական հոսքեր	(264,414,641)	(68,212,417)	(40,845,804)	-	-	-	-	-
Ետգնման ժամկետայնություն, տարի	**9**							

44.Ծրագրի ետգնման ժամկետայնությունը 9 տարի է: Տնտեսությունը 7-րդ տարվանից սկսած գործում է իր ամբողջ ներուժով՝ դրամական զուտ հոսքերը հասցնելով տարեկան 78 մլն ՀՀ դրամի, որը կպահպանվի հաջորդող տարիների ընթացքում:

45.Կերի ծախսն ընդհանուր ծախսերի հաշվարկի մեջ կազմում է միջինը 60%:

VI. ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

46.Մասնավոր հատվածի հետ համագործակցության արդյուքնում հանրապետությունում կստեղծվի մսային ուղղության սուֆֆոլկի տիպի ոչխարի տոհմաբուծարան, որն ունենալով կարևոր ռազմավարական նշանակություն, հնարավորություն կընձեռի որակապես բարելավել հանրապետության հոտերը, դրանք համալրելով տոհմասելեկցիոն նպատակաուղղված աշխատանքի արդյունքում ստացված տոհմամթերատու բարձր հատկանիշներով օժտված կենդանիներով:

47.Հանրապետությունում բուծվող ոչխարների ցեղային կազմի հարստացում՝ բարձրարժեք, մսային հատկություններով օժտված սուֆֆոլկ ցեղի գենոֆոնդի առկայություն, ոչխարաբուծության ոլորտում տոհմասելեկցիոն աշխատանքների պլանավորման և իրականացման նոր հնարավորությունների ստեղծում:

48.Տոհմաբուծարանի ստեղծումը կնպաստի հանրապետությունում բուծվող տեղական ցեղերի ոչխարների բարելավմանը, որի արդյունքում ստացված ցանկալի տիպի սերունդն օժտված կլինի բարձր պտղատվության, վաղահասության և բարձր մսային մթերատու հատկություններով, որը հնարավորություն կտա ոչխարաբուծության ոլորտը դարձնել առավել շահութաբեր:

49.Տոհմաբուծարանի ստեղծումը կնպաստի հանրապետությունում տոհմային վաճառքի ինստիտուտի կայացմանը:

50.Տոհմաբուծարանի գործունեության 3-րդ տարում պլանավորվում է շուրջ 280 գլուխ սուֆֆոլկ ցեղի մաքրացեղ կենդանիների տոհմային վաճառք, այդ թիվն արդեն 7-րդ տարում աստիճանաբար հասցնելով տարեկան 1050 գլխի: Ընդհանուր առմամբ, 2018-2025 թվականներին ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է հանրապետությունում որպես տոհմային կենդանի իրացնել ավելի քան 345 մլն ՀՀ դրամ արժողությամբ շուրջ 4250 գլուխ կիսանրբագեղմ սուֆֆոլկ ցեղի մաքրացեղ կենդանիներ:

51.Նույն ժամանակահատվածում ծրագրի մեկնարկին հաջորդող տարվանից մինչև 2025 թվականը ներառյալ հանրապետությունում տարեկան կարտադրվի հավելյալ 78 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ շուրջ 37.5 տոննա բարձրորակ ոչխարամիս և 43.8 մլն ՀՀ դրամ արժողությամբ 43.4 տոննա (ֆիզիկական քաշով) կիսանուրբ բուրդ: